ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

7 հունիսի 2016 թվականի **թիվ 65** քաղ. Մոսկվա

Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 877 որոշման 3-րդ կետում փոփոխություններ կատարելու մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29–ի պայմանագրի 52-րդ հոդվածին եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 2 հավելվածի 11-րդ կետին համապատասխան, հաշվի առնելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 20-ի թիվ 48 որոշմամբ հաստատված՝ «Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի մշակման, ընդունման, փոփոխությունների կատարման եւ չեղարկման կարգի վերաբերյալ» հիմնադրույթի 6-րդ կետը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. «Մաքսային միության՝ «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգն ընդունելու վերաբերյալ»

Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 877 որոշման 3-րդ կետում կատարել հետեւյալ փոփոխությունները.

ա) 3.2.2-րդ ենթակետում «Որոշումներ» բառը փոխարինել «Որոշումներ,» բառով.

բ) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.2.3 եւ 3.2.4 կետեր.

«3.2.3. Ղազախստանի Հանրապետության տարածքում արտադրվող «Toyota» (առեւտրային անվանումը՝ «Fortuner») տրանսպորտային միջոցի նկատմամբ տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելուց առաջ տրամադրված կամ ընդունված Ղազախստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջներին համապատասխանության գնահատման (հավաստման) փաստաթղթերը վավեր են մինչեւ 2017 թվականի մարտի 28-ը ներառյալ.

3.2.4. 2016 թվականի հուլիսի 1-ից Ղազախստանի Հանրապետության տարածքում սույն Որոշման 3.2.3 ենթակետին համապատասխան շրջանառության մեջ բաց թողնված տրանսպորտային միջոցների քանակը չի կարող գերազանցել 1900 հատը.»:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո եւ տարածվում է 2016 թվականի հուլիսի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա։

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան